շատ դիւրաւ կրնայ անոնց պակասու-
թիւնները շտկել. ասոր համար ջա-
նայ նաև հասկրցընել տղոց՝ թէ ինչ-
քը իրենց պատուոյն վրէժխնդիր է։

Թ. Հասկրցընէ տղոց թէ ինչքը
չուզեր ամենևին բարկանալ ու պա-
տիժ տալ իրենց, հապա անուշութիւ
վարուիլ հետերնին. ասով պզտիկ
սատան ու թեթև պատիժն ալ մեծի
տեղ կ'անցնի, ու սիրով կը խրատուին
տղաքը։

Ժ. Ընդհանրապէս զգուշանայ տղոց
ձեռք վերցընելէն. ջանայ այնպիսի
կերպ բռնել որ տղաք ամչնալով խրա-
տուին. իսկ թէ որ տղայ մը խիստ
անսաստ ու անուղղայ է, ընկերներէն
քիչ մը ատեն զատուի, անոնց հետ
չխօսի, չխաղայ. կերակուրը կամ կե-
րակրին մէկ մասը կտրուի. անով ալ
ճամբայ չգայ նէ՝ բանտ դրուի և
այլն։ Այս կերպով կրնայ վերջանալ
ան գէշ սովորութիւնը որ ընդհան-
րապէս արևելցիք խիստ հարկաւոր
կըսեպեն տղաքը խրատելու համար,
այսինքն տղոցը ապտակներ իջեցընել,
կռնակին բռնցի զարնել, ոտուընները
ֆալաֆա ըսուած գելարանով ծեծել,
ձեռուընները թաթով կամ քանոնով
ուռեցընել, և ուրիշ այսպիսի բար-
բարոսական ծեծեր բանեցընել ան-
գթութեամբ։ Այնայն թէ քանի որ
դաստիարակութիւը մեր ազգին մէջ
է ծաղկած, քանի որ տղաք գրեթէ
կաթէն կտրուածնուն պէս կըսկսին
ծեծ ուտել, քանի որ եթէ ծնողք և
դաստիարակներ և եթէ նոյն իսկ
տղաքը մտքերնին դրած են թէ ա-
ռանց ծեծի խելօք կենալ չըլլար, և
առանց ծեծի տղայ մը մարդ չըլլար,
մեծամեծ յանցանքները կրնան թե-
թև ծեծով պատժուիլ՝ անփնաս տե-
ղերուն զարնելով. բայց ամենահար-
կաւոր է որ նախ՝ զարնողը վարպե-
տը չըլլայ, հապա ծառայ մը կամ
ուրիշ ինչ և իցէ անձ մը. երկրորդ,
զարնուածքին համրանքը վարպետը
նայի որ քիչցընէ ու ներողամտութի
ցուցընէ. աս կերպով տղուն ատելի
ըլլալուն տեղը աւելի ալ սիրելի կ'ըլ-
լայ։ Բայց մենք աս նիւթիս վրայ,
այսինքն տղաքը ծեծելու կամ չծեծե-
լու վրայ ուրիշ անգամ տեղն 'ի տեղը
խօսելու միտք ունինք։

Այս ընդհանուր կանոններէն կ'իմա-
ցուի թէ ինչ կերպով կրնայ վարպետ
մը իր աշակերտներուն սիրտը շահիլ.
ուրիշ շատ կանոններ ալ կան, բայց
ասոնց տակը կ'երթան, և դաստիա-
րակութեան ծանր պաշտօնը կատա-
րելու կարողութիւն ունեցողը՝ դիւ-
րաւ կրնայ անոնք ալ և ուրիշ շատ
կերպեր ալ ինքիր կողմանէ մակաբե-
րելու 'ի գործ դնել. մեր աս խօսքե-
րը, և ասկէ ետքն ալ զուրցելիքները՝
միտք ձգելու համար թող սեպուին։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Աշխարհագրութեան։

Դ.

Պէտքն ու հողերու վրայ։

Հ. Ինչ է գետինը, հողը և եր-
կիրը.

Պ. Պէտքն կ'ըսուի սովորաբար եր-
կրիս երեսի հողը որ կը կոխենք, և
անմիջապէս արևուն ճառագայթները
վրան կը զարնեն. աս գետնին հողը
տեղ տեղ խոր՝ տեղ տեղ ալ ծանծաղ
է, բայց միշտ բաւական միջոց կայ որ
բոյսերուն արմատները մէջը խրին և
համարձակ տարածուին. անոր հա-
մար աս վրայի կարգը կ'ըսուի բուսա-
կան հող։ Իսկ գետնին երկրորդ կարգը
որ բուսական հողին տակն է՝ առջինէն
տարբեր յատկութիւններ ունի, և
ասոր խորութեանը չափը որոշ չէ։
Յաբեմն աս երկրորդ կարգը հողի
տեղ քար կ'ըլլայ։

Հող կ'ըսուի ան հաստ կամ բարակ
փոշին որ ամենևին համ չունի. շօշա-
փելու ատենդ՝ երբեմն աւազի պէս

խորտուբորտ, երբեմն ալ կաւի պէս կակուղ կ'երևնայ. ջրով կը թրջի, բայց աղի կամ շաքարի պէս չհալիր անոր մէջ. թէ որ կրակի մէջ ձգես, աղիւսի պէս կը կարմրի, բայց չայրիր ածուխի պէս։

Լոկ Երկիր կ'ըսուի գետնի մը չափաւոր միջոցը՝ որուն հողը ընդհանրապէս մէկ տեսակ է. զոր օրինակ կաւոտ երկիր, աւազոտ երկիր և՝ն։ Բայց երկրագործութեան մէջ աս իրեք բառերը, այսինքն գետին, հող ու երկիր, մէկմէկու տեղ կը գործածուին։

Հ. Հողերուն սկիզբն ի՞նչ է.

Պ. Քարերը կամ ապառաժները թէպէտ և շատ կարծր նիւթեր են, բայց ջերմութեան, ցրտութեան, օդի և ջրի անընդհատ ներգործութեամբը կամաց կամաց կը մաշին կը փշրին՝ իբր թէ անդադար մուրճի[1] զարնուածքի տակ ըլլային. ասանկով կը ճղքուին, կտոր կտոր կը բաժնուին ու խիճ[2] կը դառնան. աս խիճերն ալ նոյն պատճառով բարակ փոշի կը դառնան, կամ ջրերէն քշուելով ու մէկմէկու զարնուելով կը մաշին կը կլորին, վերջապէս փոշի ու աւազ կը դառնան և կ'ըլլան հող։ Այսպէս թէ ամէն հողերն ալ նոյն նիւթերէն ձևացած չեն. հապա իրենց տակը եղած ժայռերուն բաղադրութիւնը ինչ է նէ՝ անկէ առաջ եկած հողին մէջն ալ նոյն նիւթերը կը գտնուին։

ՏՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Հողագործութեան ընդհանուր կանոններ։

Ա. Այրոր և անապական օդը մեր առողջութեան մի միայն հարկաւոր բաներէն մէկն է. ուստի ան սենեկին մէջ ուր որ մէկը կը նստի կամ գիշերը կը պառկի՝ ամէն առտու պէտք է պատուհաններն ու դռները բանալ՝ մէջի օդը փոխելու համար։ Այսպէս զի շունչ առնելով սենեկին օդը կը պակսեցընենք, շունչ տալով ալ կ'ապականենք. անոր համար ուր որ շատ մարդիկ մէկտեղ ժողված են՝ բնակարանին օդը շուտով կ'ապականի։

Բ. Շատ փնասակար է առողջութեան այնպիսի տեղ նստիլ և քնանալը՝ ուր շատ կենդանիք ժողվուած են. վասն զի բնակարանին օդը շուտով կ'ապականի. բայց աւելի փնասակար է ախոռի մէջ քնանալ, ինչպէս կ'ընեն գեղացիք՝ իրենց անասունները գիշերը պահպանութիւն ընելու համար։

Գ. Այնպէս շատ փնասակար է խիստ նեղ սենեկի մէջ պառկիլ, կամ ուր որ հոտաւէտ ծաղիկներ ու բոյսեր գտնուին, կամ տեսակ տեսակ հեղանիւթներ, ինչպէս գինի, օղի, գարեջուր և այլն։ Այսոնք երկու կերպով կը փնասեն մարդուս առողջութեանը. մէյ մը որ բնակարանին մէջի օդին զուտ մասունքը կը ծծեն, ու իրենք դէշ օդ կ'արտաշնչեն. մէյ մ'ալ որ հեղանիւթներէն ելած սաստիկ հոտը ու բոյսերէն ցնդած կազը գլխու ցաւ ու ջղի ցաւ, երբեմն ալ սաստիկ դող, ու ինչուան մահ ալ կը պատճառէ՝ թէ որ ցնդած կազը շատ ըլլայ, և մարդ երկար ատեն ան բնակարանին մէջ կենայ։

Դ. Հիւանդ մարդը աւելի շուտով կ'ապականէ բնակարանին օդը՝ քան թէ առողջը. ուստի պէտք է հիւանդի սենեկին պատուհանները ատեն ատեն բանալ որ օդ առնէ։ Այսպէս պէտք է դիտել որ հիւանդը քրտնած կամ բացուած չըլլայ. դիսի օդը շատ պաղ չըլլայ, և հիւանդին վրայ չը զարնէ։

Ե. Որչափ կարելի է ամառ ատեն արևը մտնելէն ետքը պէտք չէ ճահիճի[1] ու լճի քովերը քալել. վասն զի անոնցմէ ելած օդը փնասակար է, ու ջերմ[2] կը պատճառէ։

---

1 Ձեռիճ։ 2 Ճոգալ։

1 Պարոգ ԷԷր, 2 Սըռնա։